

ԻՄ ԱՆՈՒՇ ՏԱԻԻՂ

*Խօսք՝ Վ. Յարութիւնեան
Երաժշտ.՝ Կ. Աւետիսեան*

Գիշեր ու գոր դու հնչում ես,
Իմ անուշ տաւիղ,
Ասես աղբիւր կարկաչում ես,
Իմ անուշ տաւիղ:
Մերթ լալիս ես, մերթ ծիծաղում
Դու անխօս, անբառ,
Սրտիս ձայնով դողանջում ես.
Իմ անուշ տաւիղ:
Ով որ լսում է նուագդ,
Սէր է երագում,
Նորից գալիս է մեր բակը.
Միրտը ինձ պարգում:
Բայց ուրիշն է իմ փափաքը,
Տենչն իմ սիրասուն.
Սեւ տղին եմ ես անրջում,
Իմ անուշ տաւիղ:
Նա սիրոյ երգս լսեց
Ու անսէր մնաց,
Միրտ ունէր, բայց չ՝ յուզուեց,
Ու անցաւ գնաց:
Հնչիր տաւիղ, թող այս գիշեր
Երգդ վարարի,
Սրտիս խնդումն ու կարօտը
Պատմիր աշխարհին:
Ուրախ հնչի թող քո լարը
Մարդկանց սրտերում,
Թող, որ եարին գտնի եարը
Եւ լինի գարուն:
Իմ սրտի բաժին աշխարհը
Այս լայն աշխարհում
Ուր է չի գալիս կանչին իմ
Այ անուշ տաւիղ:
Իմ անուշ տաւիղ, իմ տաւիղ . . .

